

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ԿԱՐՕՏ**

Կարօտախտի սարսուռներով ընկճուած,
 Ես կը գրեմ սենեակիս մէջ միայնակ.
 Մոմիս տոգոյն ցոլքերուն հետ տխրունակ
 Արցունք մըն է որ կը կաթի աչքէս թաց:

Զգալ սէրը որ կը վառի կուրծքիս տակ,
 Զգալ դողը բուռն կիրքերու անանուն.
 Ու չի կրնար ըսել ամէն իրերուն
 Զքեզ տանջող խորհուրդները անյատակ:

Զի վայելեր թովանքներդ թանկագին
 Դիմագիծիդ կարկառները կանացի,
 Որոնց համար ես օրերով ջանացի
 Դրել երգ մը, թէեւ պարզ՝ այլ սրտագին:

Ըլլալ հեռու, ու երազել անդադար,
 Զորսդիդ զգալ խոր անդորրը մթաստուեր.
 Պտտցնել ցուրտ մարմինըդ կարեւէր,
 Զգայնագիրկ, անըջամոլ ու տկար:

Լիճեր, ծովեր թող գտնուին մեր մէջտեղ.
 Թէ սպասումը զիս մեռցնէ տարածամ.
 Ես երջանիկ ու գոհ պիտի միշտ ըլլամ
 Երբ կարօտըդ ներսըս փրփրի սիրազեղ:

ՄԿՐՏԻՉ ԹՕՓԱԼԵԱՆ

1918

